ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1965 Общественные науки

Ս. Հ. Սարգսյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Քաղաքացիական պատերազմի տարիներին սովետական երկրի բազմազգ ժողովուրդները հերոսաբար մարտնչում էին սպիտակգվարդիական բանակների և օտարերկրյա ինտերվենտների դեմ։ Այդ փոթորկահույզ օրերին սրբազան կռվում կուսակցության հավատարիմ օգնականը՝ մամուլը հանդես էր գալիս հեղափոխության պաշտպանների առաջին շարքերում, որպես մասսաների մոբիլիզացման ու կազմակերպման հզոր ուժ։ Մամուլը հսկայական աշխատանք կատարեց քաղաքացիական պատերազմի բնույթը և պատճառները բացահայտելու, իմպերիալիստական գիշատիչների զավթողական մտադրությունները մերկացնելու ուղղությամբ։ Նա օգնեց կոմունիստական կուսակցությանը համախմբելու Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի և գյուղացիության ուժերը, կազմակերպելու նրանց միասնական պայքարն ընդդեմ հակահեղափոխական բանդաների և օտարազգի նվաճողների։

Այդ պայքարում նշանակալի ավանդ ներդրին նաև 1918—1921 թվականներին Սովետական Ռուսաստանում հրատարակվող հայկական թերթերը[1]*։ Նրանք հայ մարտիկներին դաստիարակում էին կոմունիստական կուսակցության, սովետական իշխանության նկատմամբ անսահման նվիրվածության ոգով, բոլշևիկյան ճշմարտացի խոսքը հասցնում մարդկանց, ոգեշնչում նրանց դեպի նոր հաղթանակներ։ Բազմաթիվ հոդվածներում ու ինֆորմացիաներում, ակնարկներում ու թղթակցություններում թերթերը պատմում էին քաղաքացիական կռիվների ճակատներում հեղափոխական մտրտիկների սխրագործության մասին, ցույց տալիս Ռուսաստանի հեղափոխական ժողովրդի մղած պայքարի վեհ նպատակները, արտահայտում կուսակցության ու ժողովրդի անսասան վճռականությունն ու կամքը՝ ջախջախիչ հարված հասցնելու անարգ թշնամուն և նրան դուրս շպրտելու երկրի սահմաններից։*

Հայկական թերթերը իրենց էջերում մեծ տեղ էին հատկացնում նաև երիտասարդ սովետական հանրապետության պաշտպանունակության ամրապնդման, կարմիր բանակի հզորացման հարցերին։ Խոսելով ընդհանուր զինվորական ուսուցում անցկացնելու մասին, Մոսկվայի «Կարմիր դրոշակ» թերթը կոչ էր անում մասսաներին տիրապետել մարտական զենքին, քանի որ ճնշված ժողովուրդները միայն զենքի ուժով կարող են ձեռք բերել իրենց ազատությունը։

1919 թվականին Աստրախանի «Կարմիր բանվոր» թերթը տպագրել է Վ. Ի. Լենինի ստորագրած պատմական մի փաստաթուղթ։ Դա կուսակցության

---

1 «Կոմունիստ», 1918 թ., «Կարմիր դրոշակ», 1919 թ. (Մոսկվա), «Կարմիր օրերը», 1918 թ. (Պյատիգորսկ), «Կարմիր բանվոր», 1919 թ. (Աստրախան), «Բանվորի կռիվը», 1920 թ., «Բանվոր», 1921 թ. (Ռոստով-Նախիջևան), «Կարմիր Աստղ», 1920—1921 թթ. (Կրասնոդար), «Ենիսեյ», 1919 թ., «Կոչնակ», 1920 թ. (Աշխարհաղ) և այլն։

8-րդ համագումարի կողմից ընդունված կոչն էր հակահեղափոխությունը ճնշելու մասին։ Լենինյան այդ կոչը կուսակցական և սովետական կազմակերպությունների առջև խնդիր էր դնում մոբիլիզացնել բոլոր ուժերը, պատրաստ լինել արժանի հակահարված հասցնելու թշնամուն։ Արձագանքելով լենինյան կոչին, Ռուսաստանի հայ աշխատավորությունը ոտքի ելավ կրծքով պաշտպանելու Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները։ «Կարմիր բանվորը» ընդարձակ ինֆորմացիա տպագրեց 1919 թ. հունիսի 13-ին Աստրախանում կայացած կոմունիստական կազմակերպությունների ցույցի մասին։ Հակահեղափոխության դեմ կազմակերպված այդ հզոր ցույցում Աստրախանի բազմազգ աշխատավորները, այդ թվում և հայ տարագիրները, կոչ էին անում ջախջախիչ հարված հասցնել դենիկինյան հրոսակախմբերին և անգլիական ինտերվենտներին։ Իմպերիալիստական պետությունները խրախուսում և առաջ էին մղում հակահեղափոխական բոլոր ուժերին՝ ամեն ջանք գործադրելով ճնշելու, կասեցնելու Ռուսաստանի պրոլետարիատի հաղթական արշավը։ Ի դեպ, այդ պետությունները նույնիսկ չէին էլ թաքցնում Դենիկինին և սպիտակգվարդիական մյուս գեներալներին օգնելու իրենց մտադրությունները։ Անգլիական կառավարությունը բացահայտորեն պաշտպանում էր Դենիկինին։ Նա դիմում էր ամեն տեսակ միջոցների, միայն թե կարողանար ամրապնդել Դենիկինի դիրքերը։ Այսպես, օրինակ, անգլիական գեներալ Կորնը վրացական կառավարությանը ուղղած իր նամակում գրում է. «Իմ կառավարության կողմից առաջարկում եմ անցկացնել Դենիկինի և Անդրկովկասի նոր կազմակերպված պետությունների սահմանագիծը։ Վրացական զորքերը պետք է ետ քաշվեն Բզիբիից հարավ։ Անդրկովկասյան կառավարությունները պետք է ձեռք քաշեն Դենիկինի դեմ վարած նվաճողական քաղաքականությունից և օգնեն նրան նավթով և ուրիշ մթերքներով, և չպետք է թույլ տրվի, որ այդ մթերքները ներմուծվեն սովետական կառավարության սահմանները»[2]։

Այդ օրերին հայկական թերթերը տպագրեցին Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Ռեսպուբլիկայի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կոչը՝ ուղղված Ադրբեջանի, Դաղստանի և Վրաստանի բանվորներին ու գյուղացիներին։ Այստեղ պարզաբանվում էին Դենիկինի չարանենգ մտադրությունները Կովկասի նկատմամբ, և կոչ էր արվում պայքարի ելնել դենիկինյան վտանգի դեմ։

Ֆրանսիական իմպերիալիստները նույնպես ամեն կերպ խրախուսում ու աջակցում էին սպիտակգվարդիական հրոսակախմբերին։ Ֆրանսիական խոշոր կապիտալի ներկայացուցիչ Կլեմանսոն դրվատելով ռուսական հակահեղափոխության պարագլուխներին, կոչ էր անում, որպեսզի լեհ շլյախտիչները, ռումին բոյարները, ֆին կապիտալիստները, հայ ազգայնականները օգնեն Դենիկինին և Կոլչակին։ Հայկական թերթերը անարգանքի սյունին էին գամում Կլեմանսոյին և վճռականապես հայտարարում. «Որքան էլ հուսահատված աղաղակես, օգնություն կանչես, քեզ այլևս լսող չի լինի, բայց դու գիտես, որ աշխատավորների ցասումին ոչ մի ուժ չի դիմանալ, կջարդվեն, կխորտակվեն քո թիկնապահները։ Հին, փտած, մեռնող հասարակության զառամած պատգամախոս, դու կանցնես, կանհետանաս, քո հետևից տանելով ազատված

2 «Կարմիր դրոշակ», Մոսկվա, 1919 թ., № 3։

մարդկության նզովքն ու գարշանքը»[3]։ Մոսկվայի «Կոմունիստ», «Կարմիր դրոշակ», Աստրախանի «Կարմիր բանվոր» հայկական թերթերը մասսաներին բացատրում էին իմպերիալիստական պետությունների կողմից Ռուսաստանի հակահեղափոխական ուժերին օգնելու բուն նպատակները։ Այդ թերթերը մարքսիստորեն վերլուծելով քաղաքացիական կռիվների պատճառները, նշավակում էին ազգային բուրժուազիայի դավաճան «քաղաքագետներին»։ «Կարմիր դրոշակը» իր էջերում սուր քննադատության էր ենթարկում իշխան Լվովին, Սազոնովին, Մակլակովին, որոնք Փարիզում նստած՝ երազում էին «Մեծ Ռուսաստան» ստեղծել Ֆինլանդիայի, Լեհաստանի և ամբողջ Անդրկովկասի հաշվին։ Այդ երազանքների մեջ ոչ քիչ տեղ էր հատկացված նաև հայկական բարձրավանդակին։ Թերթը մերկացնում էր ռուսական հակահեղափոխության այդ տխրահռչակ ձայնակիցների հակաժողովրդական գաղափարները, միաժամանակ ցույց տալիս տեղական ազգայնական տրամադրությունների վտանգավոր բնույթը։ «Գեթ այսօր, գեթ այժմ պիտի հասկանան մեր նացիոնալիստները,— գրում էր թերթը,— որ իրենց գործելակերպով ոչ միայն սրում են ազգային փոխհարաբերություններն, այլև պատրաստում են ամենածանր սև օրեր հայ աշխատավորների, հայ գյուղացիների և բանվորների, հայ ժողովրդի համար»[4]։

Այն օրերին, երբ Հայաստանի դաշնակցական կառավարողները դավաճանելով հայ ժողովրդի շահերին, սերտ հարաբերություններ էին հաստատում Ռուսաստանի սևհարյուրակային, դենիկինյան կառավարության հետ, «Կարմիր դրոշակը» համարձակորեն ցույց էր տալիս, որ այդ գործարքները փաստորեն նոր ազգամիջյան կռիվների առիթ են ստեղծում Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների միջև։ Մատնացույց անելով դաշնակ կառավարողների խժդժությունները, թերթը ցույց էր տալիս, որ դաշնակցական կառավարության գործողությունները ելնում են միմիայն բուրժուազիայի շահերից. «Ահա թե ինչու այսօր ոչ մի հայ բանվոր, ոչ մի գյուղացի չի կարող հավատալ «Հայաստանի» ժամանակակից կառավարիչներին՝ այդ ստոր խեղկատակներին և փորձված դավաճաններին»[5]։ Թերթը կոչ էր անում հայ աշխատավորությանը անհաշտ պայքար ծավալել հայ ազգայնականների բոլոր նոր ավանտյուրաների դեմ և տապալել հակահեղափոխական դաշնակցական կառավարությունը։

Այսպես էին մարտնչում Ռուսաստանի հայկական թերթերը ընդդեմ հայ բուրժուազիայի, որը թշնամաբար էր ընդունում սովետական իշխանության, կոմունիստների հաջողությունները և ազգայնական խառնաժողովներում սուր էր ճոճում հայ ժողովրդի փրկության համար քաջաբար մարտնչողների՝ բոլշևիկների դեմ։ Թերթերը կոչ էին անում չհավատալ ազգային խորհուրդների փարիսեցիական հավաստիացումներին «Հայաստանի մասին» և նրանց կեղծ հայրենասիրությանը՝ «հանուն Հայաստանի»։

«Դենիկին» վերնագրով առաջնորդող հոդվածում «Կարմիր դրոշակը» պարզաբանում էր, որ այժմ Դոնի շրջանը այն հիմնական պատնեշն է, որն ընկած է Սովետական Ռուսաստանի և Կովկասի միջև, ուստի Դենիկինի ջախջախումը թերթը համարում էր սովետական պետության առաջնահերթ խնդիրը։ Դենիկինի ջախջախումից հետո Կովկասի բանվորա-գյուղացիական զինված ուժերը

3 «Կարմիր բանվոր», Աստրախան, 1919 թ., № 13։
4 «Կարմիր դրոշակ», Մոսկվա, 1919 թ., № 11։
5 Նույն տեղում։

կմիանան Սովետական Ռուսաստանի հետ,— եզրակացնում էր «Կարմիր դրոշակը»։

Թերթերը իրենց ընթերցողներին պատմում էին դենիկինյան գեներալների դաժանությունների մասին։ Այս տեսակետից ուշագրավ է բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչ Ս. Մ. Կիրովի «Դենիկինը Կովկասում» վերնագրով հոդվածը, որը տպագրվել է Աստրախանի «Կարմիր բանվոր» թերթի 1919 թ. 10-րդ համարում։ Հոդվածում Կիրովը ցույց է տալիս, թե ինչպիսի գազանությունների էին դիմում դենիկինյան հրոսակախմբերը Հյուսիսային Կովկասի խաղաղ բնակչության նկատմամբ։ Հոդվածի նյութը Թերեքի ափի Խրիստիանովսկոյե գյուղի ողբերգությունն է։ Ս. Մ. Կիրովը մերկացնում է սպիտակգվարդիական գեներալ Վոդբոլսկու անմարդկային արարքները։ «Բոլոր բնակիչներին,— գրել է նա,— ծերունիներից մինչև ծծկերները, թվով մինչև 12 հազար, գյուղից դուրս հանելով, կարգով շարեցին Արգոնի և Խրիստիանովսկոյեի միջև գտնվող դաշտում, և այստեղ էր, որ սկսվեց թալանը։ Խուզարկության պատրվակով նրանք պրպտեցին բոլորի գրպանները, ծոցերը, վերցրին փողերը, թանկագին իրեղենները՝ ոսկեղեն դաշույններ, արծաթե գոտիներ և այլն, բոլորը, ինչ որ դժբախտ մայրերը, քույրերն ու հայրերը կարողացել էին վերցնել իրենց հետ. վերցրին գլխարկներ, մուշտակներ, կտորներ, անասուններ։ Տերերի աչքի առաջ կազակները նստեցին նրանց ձիերն ու հեռացան։

Հիվանդ, քաղցած ու մերկ դժբախտ զոհերին ուղիղ երկու օր ու գիշեր պահեցին բաց դաշտում՝ անձրևի տակ։ Լաց, հառաչանք, մահ...»։

Մի այլ հոդվածում, որի հեղինակն է Աշոտ Խումարյանը (ստորագրված է Ա. Մոայլյան), ցույց տալով սպիտակգվարդիականների անմարդկային արարքները, Թերթը գրում է. «Ուկրաինայի դաշտերը երբեք տեսած չեն այն արյունահեղությունները, որ այժմ տեղի են ունենում ցարի հին գեներալ Շկուրոյի կատաղի հրամանների շնորհիվ. կախում են, գնդակահար անում, չարչարում այն բոլորին, որոնք չեն ճանաչում գեներալ Շկուրոյի իշխանությունը»[6]։

Թերթերն իրենց ընթերցողներին տեղեկացնում էին նաև այն մասին, թե աշխատավոր ժողովուրդն ինչպիսի պայքար էր տանում դենիկինյան թիկունքում։ Այդ տեղեկությունները հիմնականում հաղորդում էին սպիտակգվարդիական ռեժիմից փախած քաղաքացիները, որոնք տեսել և զգացել էին հակահեղափոխական հրոսակախմբերի գազանությունները։ Թերթերը հաղորդում էին, որ Լուգանսկում, Դոնեցկի շրջանում ապստամբել են 5000 բանվոր, Հյուսիսային Կովկասում՝ Ստավրոպոլի, Գրոզնու շրջաններում՝ լեռնականներն ու Թերեքի կազակները։ Անդորրություն չէր տիրում նաև Դենիկինի մայրաքաղաքում՝ Եկատերինոդարում։ Իսկ Կոլչակի «թագավորության» թիկունքում՝ Կրասնոյարսկում, Տոմսկում, Տոբոլսկի շրջաններում պայքարի էին ելել ապստամբ գյուղացիները։ Թերթերը ցույց էին տալիս, որ հակահեղափոխական թիկունքի ամենահեռավոր անկյուններում բոլշևիկյան ազդեցությունը օրեցօր աճում է. «բոլշևիկներն ունեն շատ բարեկամներ»։

«Նրանց կորուստը մոտ է» վերնագրով առաջնորդող հոդվածում «Կարմիր բանվոր» թերթը գրում է. «...մենք չենք էլ կասկածում, մի բոպե անգամ, որ այդ թիկունքը մի օր, շատ մոտ ժամանակում, ծածանելու է հեղափոխության

6 «Կարմիր բանվոր», Աստրախան, 1919 թ., № 15։

կարմիր դրոշակը ու ճեղքելով Դենիկինի ու Կոլչակի շարքերը, միանալու է Խորհրդային կարմիր Ռուսաստանին»[7]։

1918 թ. հունվարի 28-ին Վ. Ի. Լենինը ստորագրեց բանվորա-գյուղացիական կարմիր բանակի կազմակերպման պատմական դեկրետը։ Սովետական մամուլը մեծ դեր խաղաց երեք միլիոնանոց բանակի ստեղծման համար կոմունիստական կուսակցության ձեռնարկած միջոցառումների պրոպագանդման ուղղությամբ։ Այդ գործում անմասն չմնաց նաև հայկական մամուլը։ Թերթերը տպագրում էին հոդվածներ ու զանազան ինֆորմացիաներ կարմիր բանակի կազմակերպման գործում ձեռք բերված հաջողությունների մասին։ Պյատիգորսկի «Կարմիր օրեր» թերթը պատմելով Հյուսիսային Կովկասում բռնկված քաղաքացիական կռիվների մասին, առաջարկում էր կազմակերպել հայկական զորամաս և այն կոչել Լենինի անունով։ «Հայկական կարմիր զորամասի շուրջը» հոդվածում կարդում ենք. «Ժամանակը և պայմանները մեզանից հրամայաբար պահանջում են կազմակերպել հայկական կարմիր զորամաս ընկ. Լենինի անունով։ Չլսել այդ կոչը, չընդառաջել մարտահրավերին, կնշանակի գերեզմանների մոտ սարսռագին սպասել գերեզմանափորին։

Լիննենք ճկուն ու արդարամիտ, լիննենք հեղափոխական բանակների հետ և նրանց բախտակից, միշտ գիտակցելով, որ՝ անտարբերների վաղը զարհուրելի է»[8]։

«Կարմիր օրերը» ագիտացիոն-կազմակերպչական լայն աշխատանք էր տանում հայ բանվորներին ու չքավոր գյուղացիներին կարմիր զորաբանակի շարքերն ընդգրկելու ուղղությամբ։ Կուսակցության կոչը թերթի միջոցով աշխատավոր մասսաներին հասցնելուց հետո, հայկական զորագնդի կազմակերպման հարցը ավելի ու ավելի իրական էր դառնում։ Հարյուրավոր մարդիկ դիմում էին մեծ Լենինի անուն կրող զորագնդի շարքերն ընդունվելու և հեղափոխության նվաճումները պաշտպանելու համար։

Հայկական զորագունդը քաղաքացիական կռիվների տարիներին հերոսական մարտեր մղեց Հյուսիսային Կովկասի զանազան ճակատներում և ցույց տվեց արիության շատ օրինակներ։

1919 թ. սկզբին կուսակցության Կենտրոնական կոմիտեն արձակեց «Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է» լոզունգը։ Ամբողջ երկիրը հայտարարվեց միասնական ռազմական ճամբար։ Սովետական երիտասարդ հանրապետության օրհասական այդ մոմենտին պարենավորման վիճակը բարելավելու նպատակով կուսակցությունը անհրաժեշտ էր համարում Վոլգան, Ուրալը, Սիբիրը անհապաղ մաքրել հակահեղափոխական բանդաներից։ Մասսայական արշավանք հացի համար, ռազմական գործի մասսայական ուսուցում, բանվորների մասսայական զինում ու բոլոր ուժերի լարում հակահեղափոխական բուրժուազիայի դեմ — ահա կոմունիստական կուսակցության առաջադրած նոր խնդիրները։ Կուսակցական-սովետական հայ պարբերական մամուլը սիստեմատիկաբար ցույց էր տալիս, թե աշխատավոր մասսաները ինչպիսի ոգևորությամբ ընդունեցին այդ կոչը։ Թերթերը հրապարակում էին երկրի պաշտպանությանը նվիրված աշխատավորների միտինգների ու ժողովների հաշվետվությունները, ընդունված որոշումները։ Նրանք պատմում էին կուսակ-

7 «Կարմիր բանվոր», Աստրախան, 1919 թ., № 14։
8 «Կարմիր օրեր», Պյատիգորսկ, 1918 թ., № 18։

գական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների մասին։ Կուսակցական շաբաթ անցկացնելու մասին «Կարմիր բանվոր» թերթում հրատարակված Աստրախանի կոմիտեի կոչն իր արձագանքը գտավ հայ ազգաբնակչության շրջանում։ Հարյուրավոր գիտակից առաջավոր բանվորներ ցանկություն հայտնեցին թշնամու դեմ կռվել կոմունիստի կոչումով։ Աստրախանում հրատարակվող «Կարմիր բանվոր» թերթը այդ օրերին գրում էր. «Ո՞ղ բոլոր նրանք, ում թանկ է աշխատավորության բախտն ու երջանկությունը, ում խորթ չեն աշխատանքի թագավորության սկզբունքները, գան կանգնելու մեր կողքին, աշխատավորության մեծ հեղափոխությունը պաշտպանելու համար»[9]։

Արձագանքելով կուսակցության կոչին, Ռոստով-Նախիջևանի երիտասարդական կոմունիստական միության հայկական սեկցիայի անդամներն ընդհանուր ժողովում անարգանքի սյունին գամեցին սպիտակգվարդիական հրոսակախմբերին և պատրաստակամություն հայտնեցին մինչև վերջ պաշտպանել սոցիալիստական հայրենիքը։ Հայ երիտասարդների կողմից ընդունված բանաձևում, որը տպագրվել է «Բանվորի կոիվը» թերթի 1919 թ. № 28-ում, ասված է. «Մենք, Ռուս. կոմերիտմիության հայկական սեկցիայի անդամներս, պատրաստ ենք մեր ամբողջ ուժն ու եռանդը նվիրելու, թե՛ ֆրոնտում և թե՛ թիկունքում ամրացնելու հեղափոխության նվաճումները և վերջ տալու Ղրիմի սև բարոն Վրանգելի հարձակումներին, վերջնականապես ոչնչացնելու նրա խղճուկ զորքի վերջին մնացորդները։ Կեցցե՛ Կարմիր բանակը։ Կեցցե՛ հեղափոխության վերջնական հաղթանակը բարոն Վրանգելի դեմ»։

Կարմիր բանակին ամենօրյա օգնություն ցույց տալու համար Կրասնոդարի կոմերիտմիության հայկական սեկցիան կազմակերպում է Վրանգելի դեմ պայքարի շաբաթ։ Այդ օրերին տեղի էին ունենում միտինգներ, երեկոներ, որտեղ հայ երիտասարդությանը բացատրվում էր հեղափոխությանը, սովետական իշխանությանը սպառնացող վտանգի լրջությունը։ Այդ ժողովներում ելույթներ էին ունենում այնպիսի ակտիվ գործիչներ, ինչպիսիք էին Բրուտյանը, Վ. Տեր-Պողոսյանը (ՍՍՌՄ ժողովրդական դերասան Վ. Վաղարշյան), Բալյանը և ուրիշներ*։

Սովետական իշխանության թշնամիների ոտնձգությունները բողոքի հրոկայական ալիք առաջացրին նաև կապիտալիստական երկրների աշխատավորության լայն շրջաններում։ Ամբողջ աշխարհի աշխատավորները խանդավառությամբ և հպարտությամբ էին հետևում Սովետական Ռուսաստանին, բանվորների ու գյուղացիների այն միակ երկրին, որն անձնազոհ կերպով մարտնչում էր օտարերկրյա ինտերվենտների և սպիտակգվարդիական բանդաների դեմ։ Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի և նրա կուսակցության պայքարը ոգևորում էր կապիտալիստական երկրների աշխատավորությանը՝ նրանց ամենօրյա դասակարգային մարտերում։ Արևմուտքի մի քանի երկրներում հեղափոխական մարտերը շարունակվում էին նոր թափով։ Եվրոպայում և Ամերիկայում լայն ծավալ էր ստացել «Ձեռքերդ հեռո՛ւ Սովետական Ռուսաստանից» լոզունգը։ Իմպերիալիստներն անասելի դաժանությամբ ճնշում էին բանվորական ելույթները։ Արյան մեջ խեղդվեցին Գերմանիայի և Հունգարիայի բանվոր դասակարգի հեղափոխական շարժումները։ Սակայն պայ-

9 «Կարմիր բանվոր», Աստրախան, 1919 թ., № 17։

* Հնարավորություն չունեցանք վերծանելու Կրասնոդարում աշխատած մի քանի գործիչների անունները (Ս. Ս.)։

քարը շարունակվում էր։ Ամրապնդվում էր ամբողջ աշխարհի աշխատավորների միասնությունը։ Միջազգային պրոլետարիատը ոտքի էր ելել պաշտպանելու առաջին սոցիալիստական պետությունը, թույլ չտալու իմպերիալիստներին խեղդել ռուսական հեղափոխությունը։ Մոսկվայի «Կոմունիստ», «Կարմիր դրոշակ», Ռոստով-Նախիջևանի «Բանվորի կռիվը», Կրասնոդարի «Կարմիր աստղ» և հայկական մյուս թերթերը իրենց ընթերցողներին մանրամասնորեն պատմում էին միջազգային պրոլետարիատի պայքարի մասին՝ ի պաշտպանություն սովետների երկրի։ Նրանք հաղորդում էին, որ անգլիական բանվորները պահանջում էին չմիջամտել Սովետական Ռուսաստանի ներքին գործերին։ Ֆրանսիայի աշխատավորությունը կոչ էր անում պատրաստ լինել առաջին իսկ ահազանգով ելնելու ի պաշտպանություն ռուսական հեղափոխության նվաճումների, գերմանական բանվոր դասակարգը Ֆրանկֆուրտում, Իննայում, Համբուրգում, Բեռլինում, Բրեսլավլում, Սիլեզիայի և Պրուսիայի այլ քաղաքներում գործադուլային շարժում էր սկսել ի պաշտպանություն Սովետական Ռուսաստանի։

Բարձրացող պրոլետարական հեղափոխության հզոր ալիքից սարսափած այդ երկրների բուրժուազիան բոլոր միջոցներով, հատկապես մամուլով ճգնում էր խաբել սեփական երկրի պրոլետարիատին, շեղել նրա ուշադրությունը և թույլ չտալ, որպեսզի նա հանդես գա Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանությամբ։ Մերկացնելով իմպերիալիստական պետությունների այդ խաբեությունները, «Կարմիր դրոշակը» «Միջազգային ռեակցիան» վերնագիրը կրող առաջնորդողում գրում էր. «Մինչև այժմ իմպերիալիստները հակահեղափոխությանն օգնում էին գաղտնի կերպով։ Մինչև այժմ նրանք աշխատում էին ապացուցել, որ Արխանգելսկի և Սիբիրի հակահեղափոխությունը սնվում էր տեղական ազգաբնակչության միջոցներով։ Այդ քաղաքականության, այդ կեղծավորության շնորհիվ և՛ անգլիական, և՛ ֆրանսիական իմպերիալիստները խաբում էին եվրոպական պրոլետարիատին»[10]։

Սովետական Ռուսաստանի հայկական թերթերը մեծ դեր խաղացին հայ աշխատավորությանը միջազգային կոմունիստական ու բանվորական շարժմանը ծանոթացնելու ուղղությամբ։ Նրանց տպագրած հոդվածներում ու թղթակցություններում հստակորեն զգացվում էր այն ջերմ վերաբերմունքը, անհուն համակրանքը, որ տածում էին սովետական մարդիկ տարբեր երկրների պրոլետարների հեղափոխական շարժումների նկատմամբ։ Բնորոշ է, որ այդ նյութերում տեղ են գտել նաև ՌԿ(բ)Պ 8-րդ համագումարի և Երրորդ ինտերնացիոնալի Լենինի կողմից ստորագրված հեռագրերը Հունգարիայի կոմունիստներին և Հունգարիայի սովետական հանրապետությանը։ Թերթերում հրատարակված հոդվածներում ընդհանրացվում էր միջազգային պրոլետարիատի հեղափոխական պայքարի փորձը։ Թերթերը մարքսիզմ-լենինիզմի ուսմունքի հիման վրա ցույց էին տալիս աշխատավորության պայքարի ուղին, մերկացնում պրոլետարիատի թշնամիների գործողությունները։

Կուսակցական և սովետական հայ պարբերական մամուլը ուշի-ուշով հետևում էր քաղաքացիական կռիվների ընթացքին և մասսաներին ճշմարտացի ինֆորմացիա տալիս զանազան ռազմաճակատներում տիրող վիճակի մասին։

---

10 «Կարմիր դրոշակ», Մոսկվա, 1919 թ., № 6։

Կարմիր բանակի յուրաքանչյուր հաջողություն անսահման ուրախություն էր պատճառում Ռուսաստանի հայ ազգաբնակչությանը։

Երբ արդեն ջախջախվել էին Կոլչակը, Կրասնովը, Կալեդինը և մյուս հակահեղափոխական ուժերը, նորից գլուխ բարձրացրեց Դենիկինը։ Թերթերն այդ օրերին վճռական կռվի էին կոչում յուրաքանչյուր հայ մարդու, բոլոր նրանց, ում համար թանկ էր սովետական իշխանությունը։ Նրանք պահանջում էին, որ ամեն մի գիտակից աշխատավոր, ամեն մի ազնիվ քաղաքացի ոտքի կանգնի, պայքարի նետվի ընդդեմ անարգ թշնամու։

«Կարմիր բանվոր» թերթի էջերում այդ օրերին հաճախ կարելի էր հանդիպել այսպիսի կոչերի. «Բանվոր ու գյուղացի, թո՛ղ քո խաղաղ աշխատանքը. թշնամին սպառնում է քո կյանքին, նա ուժեղ է ու խարդախ»։ «Հրացանը ձեռքիդ կանգնի՛ր հեղափոխության նվաճումների պաշտպան, գնա Կարմիր բանակ»։ «Բանվորա-գյուղացիական հանրապետությանը սպառնում են սնահոգի, ստոր հակահեղափոխականները, մա՛հ նրանց»։ «Դու պետք է ջախջախես թշնամուն, բանվո՛ր, դու պետք է ոչնչացնես բոլոր քո թշնամիներիդ»։ «Լարի՛ր քո վերջին ուժերը»։

«Կարմիր աստղ» նույնպես տպագրելով նման կոչեր, մեկնաբանում էր ռազմաճակատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ հաղորդագրությունները։ Իր համարներից մեկում, օրինակ, նա հաղորդում էր. «Պանծալի Կարմիր բանակը Ղրիմի ճակատում փայլուն հաղթանակ է տարել։ Վերցված է Պերեկոպը և Մելիտոպոլը։ Թշնամին շրջապատված է և կտրված Ղրիմից։ Մեր զորաբանակի երկաթյա օղակը օր-օրի վրա սեղմում է բարոնին. կարմիր զորամասերի առաջխաղացումը դեպի Ղրիմ շարունակվում է։ Գեներալ Վրանգելը իր նախորդ Դենիկինի նման նետվելու է ծով»[11]։

Հայկական թերթերում հաճախակի հանդես էին գալիս կարմիր բանակի ականավոր հրամանատարները, որոնք հայ ընթերցողներին հասկանալի լեզվով պատմում էին կարմիր զորքերի տարած հաղթանակների մասին։ Այդպիսի հոդվածներով թերթերում հանդես էին գալիս Ալ. Մյասնիկյանը (Մարտունի ստորագրությամբ), երկաթյա դիվիզիայի լեգենդար հրամանատար Գայը՝ Հայկ Բժշկյանը (բանվոր Հայկ ստորագրությամբ), Աստրախանի նահանգի ներքին գործերի կոմիսար Աշոտ Խումարյանը, Կովկասյան առաջին կարմիր բանակի կոմիսարներից մեկը՝ Գ. Ղարիբյանցը և ուրիշներ։ Մոսկվայի «Կոմունիստի» էջերում բացատրելով կարմիր բանակի դերն ու նշանակությունը, Ալ. Մյասնիկյանը նշում էր, որ նա արմատապես տարբերվում է մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր բանակներից։ Կարմիրբանակայինը հանդիսանում է անկեղծության, ինքնազոհության, հերոսության տիպար։ Մյասնիկյանը առաջ էր քաշում կարմիր բանակում իսկական կարգապահություն ստեղծելու հարցը։ «Զորքից իսկույն պետք է դուրս շպրտվեն անպետք տարրերը, վախկոտները, ձրիակերները, մատնիչները։ Եվ նա, ով դեմ է այդպիսի բանակի ստեղծմանը, նա հեղափոխության, սոցիալիզմի թշնամին է, նա չի կարող խուսափել ամենախիստ դատաստանից»[12]։

Հայկ Բժշկյանը իր մի շարք հոդվածներում ցույց էր տալիս, թե ինչպես ստեղծվեց կարմիր գվարդիան, այն ուժը, որը դարձավ կարմիր զորաբանակի

---

11 «Կարմիր աստղ», Կրասնոդար, 1920 թ., № 23։

12 «Կոմունիստ», Մոսկվա, 1918 թ., № 5։

հիմքը։ «15 միլիոնանոց, փայտի ուժով հավաքած, աստծո և ցարի անունով երդվեցրած ու սնած, գավազանային դիսցիպլինային ենթարկված ու չորսամյա իմպերիալիստական սպանդանոցից բոլորովին հոգնած ու զզված զորքը,— գրում էր նա,— չէր կարող խորհրդային իշխանության նեցուկ լինել և ոչ էլ բանվորության շահերը պաշտպանել։ Նա պետք է քայքայվեր անպայման, որպեսզի մոխրակույտի տակից առկայծող նոր ուժերը ստեղծեին մեր բանվորական դասակարգային զորքը — կարմիր զորքը»[13]։ Ցույց տալով կարմիր գվարդիայի պատմական միսիան, հոդվածի հեղինակը միաժամանակ մատնանշում էր, որ ներքին հակահեղափոխությունը ճնշելու և օտարերկրյա ինտերվենցիային ջախջախելու համար սովետական իշխանությանը հարկավոր է զուտ դասակարգային բանվորական ուժ։ «Այսօր, սակայն, Ռուսաստանի պրոլետարիատը կարող է պարծենալ իր շնորհալի մարզված զորքով, նրա փառավոր հաղթություններով և հուսալ, որ կարմիր զորաբանակը, հեղափոխության կարմիր դրոշակը ձեռքին, որպես անսասան և անպարտելի ապառաժ, հզոր ուժ, կանգնած է հաղթանդամ, ու նրա կրծքի վրա մեկը մյուսի հետևից փշրվում են անօգնական հակահեղափոխական ու իմպերիալիստական բոլոր հոսանքները»[14]։

Օտարերկրյա ինտերվենտների և ներքին հակահեղափոխական ուժերի դեմ մղված կռիվներում աճեց ու զարգացավ կարմիր բանակը։ Ընդամենը երեք-չորս տարվա պատմություն ուներ կարմիր բանակը, սակայն նրա գործած սխրանքներն ու հաղթանակները ցույց տվեցին աշխարհին, որ պրոլետարիատի ստեղծագործ ուժը անսպառ է ու անսասան։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը իր շուրջը համախմբելով քաղաքի և գյուղի աշխատավորությանը կազմակերպեցին ու գլխավորեցին սովետների հանրապետության հաղթանակը օտարերկրյա ինտերվենտների և սպիտակգվարդիական հակահեղափոխական ուժերի դեմ։

Ռուսաստանի կուսակցական և սովետական հայ պարբերական մամուլը մեծ դեր խաղաց քաղաքացիական կռիվների ընթացքում կուսակցության և կառավարության միջոցառումների պրոպագանդման, մասսաների մոբիլիզացման գործում։ Այդ տարիներին հայկական թերթերում ակտիվ աշխատանք էին տանում Վ. Տերյանը, Ա. Կարինյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Հովսեփյանը, Բ. Բորյանը, Վ. Երեմյանը, Հ. Գյուլիքևխյանը, Ե. Զուբարը և շատ ուրիշներ։ Նրանց հոդվածներն ու ակնարկները, պատմվածքներն ու ինֆորմացիաները ուշագրավ են իրենց կրքոտությամբ, ապագայի նկատմամբ լավատեսությամբ և հեղափոխական ռոմանտիկայով։ Կարդալով թերթերում տպագրված նյութերը, հայ աշխատավորությունը համակվում էր հեղափոխական գաղափարներով, ոգեշնչվում ձեռք բերված հաղթանակներով և, օրինակ ունենալով Սովետական Ռուսաստանի փորձը, նախապատրաստվում գալիք մարտերին։

---

13 «Կարմիր դրոշակ», Մոսկվա, 1919 թ., № 5։

14 Նույն տեղում։

С. У. Саркисян

АРМЯНСКИЕ ГАЗЕТЫ СОВЕТСКОЙ РОССИИ В ГОДЫ ГРАЖДАНСКОЙ ВОЙНЫ

Резюме

В истории армянской периодической печати видное место занимают армянские газеты, издаваемые в 1918—1921 гг. в различных городах Советской России.

В Москве издавались армянские газеты «Коммунист» и «Кармир дрошак» («Красный флаг»), в Пятигорске — «Кармир орер» («Красные дни»), в Астрахани — «Кармир банвор» («Красный рабочий»), в Нахичеване на-Дону — «Банвори крив» («Борьба рабочего») и «Банвор» («Рабочий»), в Краснодаре — «Кармир астх» («Красная звезда»), в Ашхабаде — «Шефор» («Горн») и «Кочнак» («Набат») и т. д. Эти газеты являются летописью борьбы армянских трудящихся в тяжелые годы гражданской войны.

Печать активно помогала партии мобилизовать все силы трудящихся армян Советской России и направлять их на борьбу против белогвардейцев и иностранных интервентов.

Газеты на своих страницах разъясняли народным массам причины и характер гражданской войны, организационно готовили их к предстоящей борьбе. В многочисленных газетных материалах рассказывалось о героических подвигах Красной Армии. Печать вселяла веру в победу, пропагандировала мероприятия, проводимые коммунистической партией и советским правительством в деле организации разгрома иностранной интервенции и контрреволюционных белогвардейских полчищ. Одновременно армянские журналисты выявляли реакционную сущность армянских буржуазно-националистических партий, показывали подлинное лицо сообщников иностранных интервентов и белогвардейцев.

Правдивое большевистское слово проникало в сердца людей, призывало их к борьбе. Армянские газеты сыграли большую роль в деле коммунистического воспитания масс.